# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 101 - 102 (16598) ՇԱԲԱԹ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ



*Դեկտեմբերի 22-ին, Վրաստանի խորհրդարանում, Վրաստանի նոր կազմի 15-ժամյա քննարկումից հետո, որի ընթացքում ծրագրային ելույթներով հանդես եկան վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ տարբեր ոլորտների նախարարի թեկնածուներ, պատգամավորները՝ 103 կողմ, 17 դեմ ձայներով հավանություն տվեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու գլխավորած կառավարության կազմին ու նրա կողմից ներկայացված «Ազատություն, արագ զարգացում, բարեկեցություն» ծրագրին:*

Այսպիսով, Գիորգի Կվիրիկաշվիլին երկրի վարչապետի կարգավիճակում երրորդ անգամ արժանացավ օրենսդիր մարմնի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ

*Վրաստանի խորհրդարանը՝ 115 կողմ ձայներով, երկրորդ ընթերցմամբ ընդունեց երկրի սահմանադրության նոր խմբագրությունում կատարած փոփոխությունների նախագիծը:*

Փոփոխություններն առնչվում են սահմանադրության առանձին հոդվածներին՝ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ խմբագրական, տեխնիկական տեսանկյունից: Փոփոխություններից մեկն առնչվում է սահմանադրության 18-րդ հոդվածին, որը վերաբերում է հանրային տեղեկատվության մատչելիությանը:

Նշենք, որ սահմանադրական օրինանախագծի փոփոխություն-




(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՄԱՆՈՐՅԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԸ



*Դեկտեմբերի 20-ին, Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում անցկացվեց ամանորյա ընդունելություն, որին ներկա էին Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների, դատական իշխանության, մայրաքաղաքի կառավարության, վրաց եկեղեցու հոգեւոր դասի ներկայացուցիչներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագետներ: Ընդունելությանը մասնակցում էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը տիկնոջ հետ:*

Ընդունելությանը հնչեցրած իր խոսքում, Վրաստանի նախագահը 2017-ն անվանեց Վրաստանի պատմության կարեւորագույն տարի: «Այս տարի մեր պետությունը

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ...ԵՎ ԼՈՒՅՍԵՐՈՎ ՇՈՂՇՈՂԱՑ ԵՐԿՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԸ

### ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԲԱՑՎԵԼ ԵՆ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱՎԱՃԱՌԱԿԵՏԵՐ

*Թբիլիսիում արդեն իշխում է Նոր տարվա տրամադրությունը. մայրաքաղաքի փողոցները զարդարված են ամանորյա լուսավորությամբ: Իսկ դեկտեմբերի 15-ին, քաղաքի կենտրոնում՝ Ռուսթավելու պողոտայում, վառվեցին խորհրդարանի շենքի մոտ տեղադրված երկրի գլխավոր տոնածառի լույսերը: Ազատության հրապարակում Սուրբ Գիորգիի արձանը, ավանդույթի համաձայն, զարդարվել է լուսավառ կոնստրուկցիայով, որը հեռվից եղեւնի է հիշեցնում:*



Երկրի գլխավոր տոնածառի լույսերի վառման արարողությանը մասնակցեցին Թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձեն, մայրաքաղաքի եւ երկրի գործադիր ու օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ ԹԵՐԹԸ 97 ՏԱՐԵԿԱՆ Է

1920 թվականի դեկտեմբերի 20-ին լույս տեսավ «Վրաստան» թերթի առաջին համարը: Մենք արդեն 97 տարեկան ենք:

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

*Դեկտեմբերի 20-ին, Վրաստանի Պատրիարքարանում Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանի հետ:*



Շնորհավորելով Իլիա Երկրորդին գահակալման 40-ամյակի կապակցությամբ, եւ նրան մաղթելով քաջառողջություն՝ Ռուբեն Սադոյանը Վրաց Պատրիարքին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի ողջույններն ու բարեմաղթանքները:

Խոսելով վրաց եւ հայ ժողովուրդների փոխհարաբերությունների բազմադարյա ավանդույթների մասին, Իլիա Երկրորդը ընդգծեց, որ պատմական որեւէ կտրվածքում, երբ մեր երկու ժողովուրդներից մեկը ծանր եւ փորձություններով լի շրջան է ապրել, մյուսն այդ ազդեցությունն իր վրա է կրել նույնպես:

Ռուբեն Սադոյանը, իր հերթին, նշեց, որ մեծ պատիվ է համարում այն, որ դիվանագիտական իր առաքելությունը սկսում է Իլիա Երկրորդի օրհնությամբ: Խոսելով հայերի եւ վրացիների ընդհանրությունների մասին, դեսպանն ընդգծեց, որ կիրագործի ամեն հնարավորը՝ եղբայրական ազգերի միջեւ կապն առավել խորացնելու եւ հիմքերն առավել ամրակայելու համար:

Հանդիպման ավարտին, Համայն Վրաստանի Պատրիարք Իլիա Երկրորդը հայ ժողովրդին հաջողություններ մաղթեց, հավելելով. «Աստված պահապան հայ ժողովրդին եւ բարեկամ Հայաստանին»:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ՀԱՅ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻՆ

*Դեկտեմբերի 21-ին, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն, Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունում (ԱԻՆ), Վրաստանի ՆԳՆ-ի կողմից պարգեւներ հանձնեց, ամռանը, Բորժոմիի կիրճում անտառային հրդեհների մարման աշխատանքներին մասնակցած հայ հրշեջ-փրկարարներին:*

Գիորգի Սագանելիձեն Վրաստանի ՆԳ նախարարության «Հատուկ ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալ հանձնեց Հայաստանի ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, գեներալ-մայոր Մուշեղ Ղազարյանին: Վրաստանի ՆԳՆ «Արիության համար» մեդալով պարգեւատրվեց Հայաստանի փրկարար ծառայության տարբեր ստորաբաժանումների 15, շնորհակալագրով՝ 43 ծառայող:

Հիշեցնենք, որ այս տարվա օգոստոսին, բռնկված հրդեհը կանխելու օգնությամբ, Վրաստան էր ժամանել Հայաստանի ԱԻՆ փրկարար ծառայության 57-հոգանոց ջոկատ:

Այդ օրերին հայ հրշեջների վրանային քաղաք էր այցելել Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին՝ իր երախտագիտությունը հայտնելու հայ հրշեջ-փրկարարներին: Նրանց շնորհակալական խոսքեր էին հղել նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ները ներառում են հետեւյալ ուղղությունները. սահմանադրության նոր խմբագրությունում չեղարկվում է, այսպես կոչված, բոնուսային համակարգ: Նոր տարբերակի համաձայն, չբաշխված խորհրդարանական մանդատները հետեւողականորեն կստանան լավագույն արդյունքներով քաղաքական կուսակցությունները:

Հաջորդ ընտրություններին, քաղաքական կուսակցությունների հետ միասին, դրանց կմասնակցեն նաեւ ընտրադաշինքները:

Փոփոխություն է կատարվել դավանանքի եւ խղճի ազատության մասին 16-րդ հոդվածում, որտեղից հանվել են «Պետական անվտանգություն», «Հանցագործության կանխում» եւ «Արդարադատության իրականացում» խոսքերը:

Բացի այդ, սահմանադրության նոր խմբագրությունում ընդլայնվել են սահմանադրական դատարանի իրավասությունները՝ կապված ընտրական նորմերի եւ, ընդհանրապես, ընտրությունների ոչ սահմանադրական ճանաչման հետ: Մասնավորապես, երեք ամսով ավելացվում է համապատասխան հայցերի քննարկման ժամկետը: Նաեւ չեղարկվում է գրանցումը, ըստ որի՝ ընտրությունների սահմանադրությանը համապատասխանության հարցը, սահմանադրությունը որոշում է իր ցուցակային լրիվ կազմի համաձայնությամբ:

Նոր սահմանադրական նախագծում «ընտրող» տերմինը հանվել է: Նախագիծը նախատեսում է փոփոխությունների կատարում նաեւ սահմանադրության 50-րդ հոդվածում, որը կապված է նախագահի ընտրության հետ, թեպետ դա տերմինաբանական փոփոխություն է եւ «ընտրող» տերմինը փոխարինվել է «ընտրական կոլեգիայի անդամ» արտահայտությամբ:

Նշենք, որ սահմանադրական փոփոխությունների երրորդ ընթերցմամբ ընդունումը, խորհրդարանի կողմից կանցկացվի օրենսդիր մարմնի գարնանային նստաշրջանում:

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՄԱՆՈՐՅԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նշանակալից քայլ կատարեց եվրոպական հիմնական արժեքների զարգացման, մեր ժողովրդավարության ծաղկման եւ ամրապնդման ուղղությամբ: Այս տարի լրացավ Միավորված ազգերի կազմակերպության կողմից Վրաստանի ճանաչման 25-ամյակը: Այս կարեւորագույն տարում Վրաստանը եւս մեկ քայլ կատարեց եվրոպական ինտեգրման ուղղությամբ, եւ ներկայումս վրացական անձնագիրը Եվրոպայում գործում է առանց այցեգրի: Այս տարի մեզ մոտ տնտեսական աճը ավելի էր, քան կանխագծում էինք: Այս տարի անցկացվեցին տեղական ինքնակառավարման ընտրությունները: Բնականաբար, մենք դեռեւս շատ եւ նշանակալի նպատակների պետք է հասնենք, առավել եւս, որ հաջորդ տարի Վրաստանի անկախության վերականգնման 100-ամյա հոբելյանն է»,- հայտարարել է Գիորգի Մարգվելաշվիլին:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, նշեց. «Վրաստանն արժանապատվորեն հաղթահարեց բազում մարտահրավերներ: Կային նաեւ մեծ ձեռքբերումներ, բնականաբար, հարկ է ընդգծել այցեգրերի ազատականացումը: Դա վիթխարի վստահություն է Եվրամիության կողմից Վրաստանի նկատմամբ եւ, բնականաբար, քաղաքական կարեւորագույն քայլ»,- հայտարարել է վարչապետը:



Ռուբեն Սադոյանը տիկնոջ հետ Վրաստանի նախագահի նստավայրում

*Լուսանկարները՝ Լելա Բլագոնրավովայի*

ՎՐԱՍՏԱՆ - ԼԵՀԱՍՏԱՆ

# ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ



***Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի գլխավորած խորհրդարանական պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվում էր Լեհաստանում:***

Այցի շրջանակներում՝ վրաց խորհրդարանականները հանդիպումներ ունեցան լեհական Սեյմի եւ սենատի մարշալներ Մարեխ Կուխցինսկու եւ Ստանիսլավ Կարչեւսկու հետ: Բանակցությունների արդյունքում՝ կողմերը ստորագրեցին երկու երկրների միջեւ օրենսդրական բարձրագույն մարմինների համագործակցության համաձայնագիր:

Այցի շրջանակներում՝ Իրակլի Կոբախիձեն հանդիպումներ ունեցավ նաեւ Լեհաստանի վարչապետ Մաթեուշ Մորավեցկու եւ առաջին փոխվարչապետ Պյոտր Գլինսկու հետ:

Հանդիպումներում քննարկվեցին վրաց-լեհական բազմաոլորտ համագործակցության հետ առնչվող հարցեր:

Այցի շրջանակներում՝ Իրակլի Կոբախիձեն հանդիպում ունեցավ Լեհաստանի բուհերում սովորող վրաց ուսանողների հետ, դասախոսությամբ հանդես եկավ Վարշավայի համալսարանում:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ՀԱՍՏԱՏՎԵՑ ԹԲԻԼԻՍԻԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

***Դեկտեմբերի 16-ին, Թբիլիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոն՝ 38 կողմ եւ 2 դեմ ձայներով, հաստատեց մայրաքաղաքի 2018 թվականի բյուջեի նախագիծը:***



Հաջորդ տարվա համար սակրեբուլոյի կողմից հաստատված Թբիլիսիի բյուջեն կազմում է 861 միլիոն լարի, թեպետ այն հնարավոր է ավելացվի: Ինչպես հայտարարել է փոխքաղաքապետ Իրակլի Խմալաձեն, բյուջեն կարող է ավելացվել 14 միլիոն լարիի տրանսֆերով եւ 8 միլիոն լարիի տնտեսված գումարով:

Սակրեբուլոյի կողմից մայրաքաղաքի բյուջեի հաստատմանը ներկա էին Թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձեն, մայրաքաղաքի գործադիր իշխանության ներկայացուցիչները: Նշենք, որ սակրեբուլոյի ընդդիմադիր կուսակցություններից պատգամավորները, քննարկման սկզբում հանդես գալով հայտարարությամբ, հեռացան դահլիճից:

ՏՀԱՃ ՄԻՋԱԴԵՊ

# ՆԱԽՕՐՈՔ ԾՐԱԳՐՎԱԾ ՍԱԴՐԱՆՔ

***Դեկտեմբերի 20-ին, խորհրդարանում, նոր կառավարության վստահության քվեի կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ խորհրդարանի «Միասնական ազգային շարժման» խմբակցության անդամների հանդիպումն ավարտվել է բանավոր վիրավորանքներով:***

Խմբակցության լիդերներից Նիկա Մելիան վարչապետին մեղադրեց կոռուպցիայի եւ անիրավասության մեջ: Բանավեճը վերածվեց ոչ ցենզուր հայհոյանքների:

Ավելի ուշ, խորհրդարանի «Վրաստանի հայրենասերների ալյանս» խմբակցության անդամների հետ հանդիպմանը, վարչապետ Գ.Կվիրիկաշվիլին հրապարակայնորեն ներողություն խնդրեց տեղի ունեցածի համար:

Դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած միջադեպը խորհրդարանական մեծամասնությունը գնահատում է որպես Ազգային շարժման կողմից նախօրոք ծրագրված սադրանք: Ինչպես նշեց խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նախագահ Իրակլի Սեսիաշվիլին, ազգայնականների վարքը ամոթալի էր, իսկ Կվիրիկաշվիլու պատասխանը՝ պատասխանը տեղին էր նրանց արածին: Իսկ խորհրդարանի իրավաբանական կոմիտեի նախագահ Էկա Բեսելիան նշեց, որ վարչապետը պետք է համբերություն ցուցաբերեր, թեպետ լինում են դեպքեր, երբ դա անհնար է:



ՄԱԿ

## ԲԱՆԱՁԵՎ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է բանաձեւ, որով կոչ է արել ԱՄՆ-ին հետ կանգնել Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու իր որոշումից:*

*Բանաձեւին կողմ են քվեարկել 128 երկրներ, ձեռնպահ՝ 35-ը, իսկ դեմ են եղել ինը երկրներ՝ ԱՄՆ, Իսրայելը, Գվատեմալան, Հոնդուրասը, Մարշալյան կղզիները, Միկրոնեզիան, Նաուրուն, Պալաուն եւ Տոգոն:*

*Եմենի եւ Թուրքիայի ներկայացուցիչների պատրաստած բանաձեւի տեքստում նշվում է, որ Երուսաղեմի վերջնական կարգավիճակը պետք է որոշվի բանակցությունների արդյունքում, եւ կոչ է արվում բոլոր պետություններին՝ չտեղակայել իրենց դեսպանատները Սուրբ քաղաքում: Մինչ այդ շեշտվում է, որ ճանաչման ցանկացած այլ քայլ կդիտարկվի առ ոչինչ: Նշենք, որ Հայաստանը քվեարկեց բանաձեւի օգտին, իսկ Վրաստանի ներկայացուցիչը քվեարկությանը չմասնակցեց:*

ԻՍՊԱՆԻԱ

## ՀԱՂԹԵՑ «ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Կատալոնիայի անկախության օգտին հանդես եկող երեք կուսակցությունները, դեկտեմբերի 21-ին կայացած խորհրդարանական ընտրություններում, ձայների 99 տոկոսի հաշվման արդյունքներով, 70 տեղ են ստացել 135 տեղանոց օրենսդիր մարմնում:*

*«Միասին հանուն Կատալոնիայի» կուսակցությունից թեկնածուների ցուցակում, որը ստանում է 34 պատգամավորական մանդատ, առաջին համարը Կատալոնիայի նախկին ղեկավար Կառլես Պուչդեմոնն է, որը առայժս գտնվում է Բելգիայում, քանի որ Իսպանիայում նրա ձերբակալման օրդեր է տրված: Խորհրդարանում եւս 32 տեղ ստանում են «Կատալոնիայի ձախ հանրապետականները»: Չորս մանդատ բաժին է հասնում «Ժողովրդական միասնության թեկնածություն» կուսակցությանը: Կենտրոնամետ Իսպանիայի Քաղաքացիական կուսակցությունը Կատալոնիայի խորհրդարանում ստացել է 37 տեղ, ինչը 12-ով ավելի է, քան՝ 2015 թվականի ընտրություններում:*

ԹՈՒՐՔԻԱ

## ԲԵՏՈՆԵ ՊԱՏ՝ ՍԻՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԻՆ

*Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ ձգվող 911 կմ սահմանի 781 կմ երկարության գոտում ավարտվել է բետոնե պատի կառուցումը: Այս մասին հայտնում է թուրքական «Հուրիեթ» պարբերականը:*

*Բետոնե պատը կառուցվել է 7 տոննա ծանրությամբ, 2 մետր լայնությամբ եւ 3 մետր բարձրությամբ բլոկներից:*

*Պատի կառուցման աշխատանքները սկսվել էին 2015 թվականին: Այն Միացյալ Նահանգների եւ Մեքսիկայի միջեւ կառուցված պատից հետո աշխարհում ամենաերկարն էր:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑ՝ ԱՆԴԱՄ-ԵՐԿՐԻ ԴԵՄ

*Եվրահանձնաժողովը պատժիչ ընթացակարգ է գործարկել Լեհաստանի դեմ դատարանի անկախության հիմնարար սկզբունքը խախտելու համար:*

*«ԵՀ-ը Լեհաստանի նկատմամբ ընթացակարգ գործարկելու որոշում է ընդունել՝ ըստ Եվրոպական միության մասին պայմանագրի 7-րդ հոդվածի»,-հայտարարել է նա:*

*Դա տեղի է ունեցել Եվրամիության պատմության մեջ առաջին անգամ: Այժմ Եվրոպական միության մասին պայմանագրի 7-րդ հոդվածով Վարշավան կարող է ձայնի իրավունքից զրկվել ԵՄ-ի խորհրդում:*

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ



# ԵՎՐԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՎԵՑ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

***Վրաստանի հետ Եվրամիության անայցեգրային պայմանակարգի վերաբերյալ հաշվետվության շրջանակներում եվրահանձնաժողովը վեց հիմնական հանձնարարականներ է հղել Վրաստանի իշխանությանը:***

Եվրահանձնաժողովի գնահատմամբ, ընդհանուր առմամբ, Վրաստանը շարունակում է կատարել անայցեգրային պայմանակարգով նախատեսված կետերը եւ առաջիկայում սպասվում է կատարման ընթացքի բարելավում, թեպետ առանձնակի ուշադրություն պետք է բեւեռել հետեւյալ ոլորտների վրա: Մասնավորապես, հարկ է շարունակել քարոզարշավը անայցեգրային պայմանակարգի վերաբերյալ, ավարտել միգրացիայի ռիսկերի վերլուծական ուսումնասիրությունները, եւ ջանքեր գործադրել միգրացիայի հիմնական պատճառների կարգավորման ուղղությամբ: Առաջնահերթությունը շնորհել եվրոպոլի հետ համագործակցությանը, ավարտել ոստիկանության ոլորտի բարեփոխումները, եւ առաջնահերթությունը շնորհել հանցագործությունների վերլուծության համակարգի ստեղծմանը, շարունակել եւ ուժեղացնել իրավական համագործակցությունը, ավելացնել ջանքերը գումարների մաքրման դեմ օրենքի կատարման ուղղությամբ, հաստատել փոփոխություններ, որոնք կատարվել են հակախտրականության օրենքում, այն հաշվով, որպեսզի դրա կատարումը դառնա առավել արդյունավետ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻՑ ԱՐՏԱՔՍՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ 3645 ՔԱՂԱՔԱՑԻ

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը, ընթացիկ տարվա ժամանակահատվածում տարբեր երկրներից արտաքսվել է Վրաստանի 3645 քաղաքացի:***

Ըստ տեղեկատվության, մեծամասնությունն արտաքսվել է Թուրքիայից: Այդ երկրից արտաքսված քաղաքացիների թիվը կազմում է 1651, երկրորդ տեղում Իսրայելն է, որտեղից արտաքսվել է 413 քաղաքացի: Այդ ցուցակում երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Գերմանիան՝ արտաքսված 395 քաղաքացիով:

Վրաստանի 228 քաղաքացի արտաքսվել է Ռուսաստանից, 147-ը՝ Ֆրանսիայից, 109-ը՝ Շվեդիայից, 77-ական Իտալիայից եւ Շվեյցարիայից, 60-ական՝ Ավստրիայից եւ Բելգիայից, 59-ը՝ Իսպանիայից, 57-ը՝ Լեհաստանից, 56-ը՝ Հունաստանից, 53-ը՝ Նիդերլանդներից, 38-ը՝ Ուկրաինայից, 28-ը՝ Դանիայից, 21-ը՝ Ֆինլանդիայից, 18-ը՝ Նորվեգիայից, 16-ը՝ Բելառուսից, 15-ը՝ Մեծ Բրիտանիայից, 10-ական Իսլանդիայից եւ ԱՄՆ-ից, 8-ական՝ Կանադայից, Կիպրոսից, 7-ը՝ Լիտվայից, 6-ը՝ Լյուքսեմբուրգից, 1-ական՝ Ադրբեջանից, Բուլղարիայից, Իռլանդիայից, Լատվիայից, Մալազիայից, Մեքսիկայից եւ Չեխիայից:

Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա մարտի 28-ից ուժի մեջ է մտել Եվրամիության հետ անայցեգրային պայմանակարգը, որի համաձայն Վրաստանի քաղաքացիներն իրավասու են կես տարվա ընթացքում 90 օր, առանց այցեգրի, գտնվել Եվրամիության եւ Շենգենյան գոտու երկրներում: Վիճակագրական տվյալներով, անայցեգրային պայմանակարգից արդեն օգտվել է Վրաստանի 45 հազար քաղաքացի: Այդ քանակությունից, միայն 63 քաղաքացիների են արտաքսել՝ Եվրամիության երկրներում գտնվելու ժամկետի խախտման համար:

# ՎՐԱՍՏԱՆԸ՝ Doing Business ՎԱՐԿԱՆԻՇԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆՅԱԿՈՒՄ

***Համաշխարհային բանկի «Գործարարություն 2018. բարեփոխումների իրականացում աշխատատեղերի ստեղծման համար» զեկույցի համաձայն, 2017-ին Վրաստանը 9-րդ հորիզոնականում է, իսկ Հայաստանը՝ 47-րդ:***




Վրաստանը՝ 9-րդ տեղով, ընդրգկվել է աշխարհի լավագույն տասնյակում: Ըստ Վրաստանի էկոնոմիկայի տեղեկատվության, 2018 թվականին Վրաստանը 16-րդ տեղից հայտնվել է 9-րդ հորիզոնականում, 190 երկրների ցանկում:

«Վրաստանն առանձնանում է Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում՝ որպես մի երկիր, որը նշանակալի քայլեր է իրականացրել արդյունավետ եւ ավելի էֆեկտիվ կառավարման ուղղությամբ: Վրաստանի ձեռքբերումները Համաշխարհային բանկում հիմնվում են կառավարության էֆեկտիվ եւ կոորդինացված աշխատանքի վրա: Վրաստանի կառավարությունն արդեն իրականացրել եւ շարունակում է իրականացնել բարեփոխումներ, որոնք ավելի են բարելավում Վրաստանի դիրքերը Համաշխարհային բանկում հաջորդ տարվա ընթացքում»,- կարդում ենք էկոնոմիկայի նախարարության տարածած մամլո հաղորդագրության մեջ:

Զեկույցի համաձայն, ԵԱՏՄ երկրների շարքում Հայաստանը նախավերջինն է, Ռուսաստանը՝ 35-րդ հորիզոնականում, Ղազախստանը՝ 36, Բելառուսը՝ 38 եւ Ղրղզստանը՝ 77-րդ տեղում: Հայաստանում ավելի հեշտ է զբաղվել բիզնեսով, քան Ադրբեջանում, որն այս տարի 57-րդ տեղում է:

Ըստ զեկույցի, Հայաստանում դյուրացել է էլեկտրաէներգիայի ստացումը՝ միացման ընթացակարգերի համար պարտադրելով նոր ժամկետներ, եւ կոմունալ ընկերությունում ներդրվել է աշխարհագրական տեղեկությունների նոր համակարգ: Դյուրացել է գույքի գրանցումը՝ բարելավելով հողերի կառավարման համակարգի վեճերի կարգավորման մեխանիզմները:

2018 թվականին Համաշխարհային բանկի առաջին տասնյակում հայտնված երկրներն են Նոր Զելանդիան, Սինգապուրը, Դանիան, Կորեան, Հոնկոնգը, Չինաստանը, ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան, Վրաստանն ու Շվեդիան:



## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀՕՊ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ՎՐԱՍՏԱՆԻՆ

*Ինչպես տեղեկացրեց Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, Վրաստանի տարածքում արդեն տեղակայված է հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) ֆրանսիական համակարգ:*

*Հակաօդային պաշտպանության համակարգի գնման մասին Վրաստանի եւ Ֆրանսիայի միջեւ համաձայնագրերը ստորագրվել են տակավին 2015 թվականի ամռանը:*

*«Մենք հնարավոր ամեն ինչ կանենք, որպեսզի համագործակցության առաջին փուլի շրջանակներում մեր օդային տարածությունն ավելի պաշտպանված լինի, եւ մենք պատրաստ ենք ֆրանսիացի մեր գործընկերների հետ շարունակել աշխատանքը երկրորդ փուլում»,- ասաց նախարարը:*

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎԵԼ Է 850 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

*Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի նախագահ Գիորգի Սեթուրիձեի տեղեկատվությամբ, 2017 թվականին ճանապարհային ենթակառույցների կարգավորման համար ծախսվել է 850 միլիոն լարի: Նրա խոսքով, այդ ուղղությամբ նշանակալի ծրագրեր են նախատեսված նաեւ հաջորդ երեք տարիների համար: «Ճանապարհային ինդուստրիան զգալիորեն ավելացել է, եւ զարգացման տեմպերը հուսադրող են: Ինչ վերաբերում է հաջորդ տարվան, ապա, այդ առումով նշանակալից առաջընթաց կունենանք՝ հաջորդ տարվա համար ծրագրված է շուրջ 1,4 միլիարդ լարի: Իսկ 2019 թվականի համար թվերը կլինեն առավել տպավորիչ: Առաջիկայում մասշտաբային նախագծեր են ծրագրվում»,- հայտարարել է Գիորգի Սեթուրիձեն:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ
**(22 դեկտեմբերի)**

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.645 | 2.575 |
| ԵՎՐՈ | 2.932 | 3.077 |
| ՌՈՒԲԼԻ | 0.041 | 0.047 |
| ԴՐԱՄ | 0.0040 | 0.0057 |

*Դեկտեմբերի 15-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0,15 լարիով:*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՉԵՂԱՐԿՎԵԼ Է 1 684 801 553,00 ԼԱՐԻԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏՔ

***Վրաստանի հարկային օրենսգրքում կատարած փոփոխությունների արդյունքում, այդ փոփոխությունների կիրարկման (02.06.2016-18.12.2017) օրվանից մինչ օրս, հարկային օրենսգրքի 309 հոդվածի 37-րդ բաժնի համաձայն, 35941 հարկատուից չեղարկվել է հարկային պարտքը, ընդհանուր առմամբ, 1684801553,00 լարիի չափով: Այդ թվում, հոդվածի ա) ենթակետով 34986 հարկատուի չեղարկվել է 1677443546,00 լարի, բ) ենթակետով 930 հարկատուից՝ 7336248,00 լարի եւ գ) ենթակետով 28 հարկատուից չեղարկվել է 21579,00 լարի գումար:***

Վերոնշյալ փոփոխությունը Վրաստանի հարկային օրենսգրքում կատարվել է 2016 թվականի մայիսին (հրապարակվել է 2016 թվականի հունիսի 1-ին): Փոփոխությունների համաձայն, 309 հոդվածի 37-րդ բաժնի ա) եւ բ) ենթակետերը ձեւակերպվել էին նոր խմբագրությամբ, ըստ որի՝ չեղարկման էին ենթակա.

ա) մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը ծագած եւ մինչեւ սույն ենթակետի կիրարկումը չվճարած հարկային պարտքի գումարը, եթե անձը մինչեւ գումարի չեղարկումը ակտիվություն չէր վավերացրել, չէր ներկայացրել հարկային հռչակագիր/հաշիվ-հաշվարկում (բացառությամբ գույքահարկի հռչակագրի) կամ հարկային մարմնին ներկայացրած հարկային հռչակագիր-հաշիվ-հաշվարկման հիման վրա չի վավերացրել միասնական եկամուտ:

բ) Մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը ծագած, ընդունած հարկային պարտքի վրա հաշվառված պատժագումարը եւ մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը հաշվառված, ընդունված տուգանքը, ընդունված հարկային գումարի վճարման պայմանով, եթե անձը մինչեւ գումարի չեղարկումը ակտիվություն չէր վավերացրել, չէր ներկայացրել հարկային հռչակագիր/հաշիվ-հաշվարկում (բացառությամբ գույքահարկի հռչակագրի) կամ հարկային մարմնին ներկայացրած հարկային հռչակագիր/հաշիվ-հաշվարկման հիման վրա չի վավերացրել միասնական եկամուտ:

գ) Գանձարկղային սարքի օգտագործման կարգի խախտման համար ֆիզիկական անձանց մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը սահմանած-հաշվառված եւ մինչեւ այդ նորմի կիրարկումը չվճարած հարկը (գ) ենթակետը մնում է անփոփոխ):

Եկամուտների ծառայությունը հարկային պարտքի չեղարկումն իրականացնում է ինչպես իր նախաձեռնությամբ (ՎՀՕ, 309 հոդված, 37-րդ բաժին, ա) եւ գ) ենթակետերով նախատեսված դեպքերում), այնպես էլ՝ հարկատուի դիմումի դեպքում:

Հարկային պարտքի չեղարկման գործընթացը շարունակվում է:

Դիտողություն. մինչեւ սույն փոփոխության կիրարկումը չեղարկման կարգի համաձայն, մինչեւ 02.06.2016 թվականը հարկային պարտքը չեղարկվեց 16941 հարկատուի համար եւ ընդհանուր գումարը կազմեց 1.104279.889,73 լարի, այդ թվում՝ ա) ենթակետով 10952 հարկատուի չեղարկվել է 1094153961,31 լարի, բ) ենթակետով 918 հարկատուից՝ 5124844,92 լարի եւ գ) ենթակետով 7071 հարկատուից չեղարկվել է 5001083,50 լարի գումար:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

# ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հավանությանը:

Պատգամավորները հավանություն տվեցին նաեւ երկրի գործադիր իշխանության կառուցվածքային փոփոխությանը, ըստ որի՝ մինչ այդ գործող 16 նախարարությունների եւ երկու պետնախարարությունների փոխարեն երկիրը կունենա 12 նախարարություն եւ մեկ պետնախարարություն: Նշենք, որ գործադիր իշխանության կառուցվածքային փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես էր եկել վարչապետը:

Խորհրդարանի պատգամավորների հավանությանն արժանացած Գիորգի Կվիրիկաշվիլու գլխավորած կառավարության կազմում են՝ արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիան, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն, կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին, պատիժների կատարման եւ պրոբացիայի նախարար Կախա Կախիաշվիլին, փախստականների, վերաբնակեցման եւ բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց նախարար Սոզար Սուբարին, բնապահպանության, գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլին, ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Զուրաբ Ալավիձեն, արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Գիորգաձեն, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին:

Առաջին փոխվարչապետի պաշտոնում հաստատվել է էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլու թեկնածությունը, իսկ փոխվարչապետի պաշտոնում՝ արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեի թեկնածությունը:

Նշենք, որ երկրի կառավարության կազմի եւ գործունեության ծրագրի հաստատմանը նվիրված խորհրդարանի լիագումար նիստում, նախորդ օրվա կոմիտեական լսումների օրինակով, բանավոր ընդհարում տեղի ունեցավ խորհրդարանական մեծամասնության եւ ընդդիմադիր՝ «Միասնական ազգային շարժման» խմբակցության ներկայացուցիչների միջեւ:

# «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱԶԱՏ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ՝ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԻՔ

*Դեկտեմբերի 22-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին խորհրդարանի լիագումար նիստում հանդես եկավ իր գլխավորած կառավարության գործունեության «Ազատություն, ազատ զարգացում, բարեկեցություն» ծրագրով:*

Իր ելույթում վարչապետն անդրադարձավ երկրի հասարակական, քաղաքական կյանքի բոլոր ոլորտներին, նշեց այն միտումները, որոնք նպաստելու են երկրի առաջընթացին: Մասնավորապես, անդրադառնալով կրթական համակարգի բարեփոխումներին, վարչապետը նշեց, որ կառավարության, խորհրդարանական մեծամասնության որոշմամբ, հաջորդ տարվա համար կրթության բյուջեն ավելացվելու է՝ ելնելով ՀՆԱ-ի ցուցանիշից: «Այսօր գործող սխեմայով, ըստ կարգավիճակի, հավելավճար ստանում է 19 հազար ուսուցիչ, որից 66 տոկոսը ստանում է լրիվ հավելավճար, ինչն աշխատավարձի հետ միասին կազմում է մոտ հազար լարի: Երեք հազար ուսուցիչ ստանում է հավելավճար, որը սահմանվել է դեռեւս 2012 թվականին: Եվս 5 հազար ուսուցիչ ստանում է մասնակի հավելավճար, իսկ 11 հազարը՝ լրիվ հավելավճար: Բնականաբար, մեր նպատակն է, որ մանկավարժներին ապահովենք առավելագույն աշխատավարձով:

Խոսելով սոցիալական թեմայի մասին, վարչապետը նշեց, որ հարկ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի կենսաթոշակի վրա հիմնված վարկերը կենսաթոշակառուներին չտրվեն անհամապատասխան բարձր տոկոսադրույքով:

Վարչապետն անդրադարձավ նաեւ երկրում գործող քաղաքական կուսակցությունների միջեւ հարաբերություններին, նշելով, որ հաջորդ տարին պետք է առանձնանա միջկուսակցական երկխոսության տեսանկյունից, ինչը թույլ կտա առավել արդյունավետ դարձնել խորհրդարանի գործունեությունը, բարձրացնել քաղաքակիրթ երկխոսության մակարդակը:

Խոսելով նորացված կազմով կառավարության գործունեության հեռանկարների մասին, վարչապետը, նախ, շնորհակալություն հայտնեց պատգամավորներին՝ ցուցաբերած աջակցության համար եւ հավաստիացրեց, որ գործադիր իշխանության նոր կազմը նոր ջանքեր կներդնի երկրի կայունության ապահովման եւ արագ զարգացման համար: - Մեր կառավարությունը նորացված կազմով արժանացավ խորհրդարանի վստահությանը: Դա վիթխարի պատասխանատվություն է մեզ համար: Բնականաբար, մենք կհոգանք մեր համաքաղաքացիների կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ, ունենք բավական հետաքրքիր ու հագեցված ծրագիր եւ այդ ծրագրի իրականացումը, առանց չափազանցությունների, որակապես կփոխի մեր երկրի իրավիճակը: Հուսով եմ, որ այդ գործընթացը կարժանանա խորհրդարանի եւ հասարակության աջակցությանը: Ես 2018 թվականը հայտարարում եմ համընդհանուր ներգրավման տարի,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

## ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏՆՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

2018 թվականի հունվարի 1-ից պարբերաբար տեխստուգման կարգ է սահմանվում ութ եւ ավելի ուղեւորանիստ ավտոմեքենաների ու 3,5 եւ ավելի տոննա բեռնատար ավտոմեքենաների համար: 2018 թվականի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտնում մեծ տարողության շարժիչներ ունեցող ավտոմեքենաների (3,0 շարժիչով եւ ավելի), իսկ 2019 թվականի հունվարի 1-ից, առանց բացառության բոլոր մարդատար մեքենաների պարբերական տեխստուգման կարգը:

Մասնավորապես, մինչեւ չորս տարվա ավտոմեքենաների համար ստուգումը պարտադիր չի լինի, իսկ չորսից վեց տարվա ավտոմեքենաների համար՝ ստուգումը պարտադիր է երկու տարին մեկ անգամ, նույնը՝ վեցից ութ տարվա ավտոմեքենաների համար, իսկ ութ եւ ավելի տարիների շահագործման ավտոմեքենաների համար տեխստուգումը պարտադիր է տարին մեկ անգամ: Այն մասին, թե որ կատեգորիայի ավտոմեքենաներն ինչ ժամկետում են անցնելու տեխստուգում, եւ ինչ պահանջներ են ներկայացվում, մանրամասն ներկայացված է տեխնիկական հանձնարարականներում, որոնք արդեն հաստատվել են Վրաստանի կառավարության կողմից, իսկ տեխստուգման ժամանակացույցը մշակվել է ըստ մեքենաների գրանցման ամսաթվերի, ինչը ավտոտրանսպորտային համապատասխան միջոցների սեփականատերերին ժամանակ կընձեռի մեքենան պատրաստել տեխստուգման համար:

## ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՍՏՈՒԳՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Վրաստանի կառավարության կողմից հաստատված հանձնարարականներում հաստատվել են նաեւ ավտոմեքենաների տեխստուգման սակագները: Այսպես, մարդատար ավտոմեքենաների տեխստուգման սակագինը սահմանված է 60, իսկ բեռնատար եւ ուղեւորատար մեքենաներինը՝ 100 լարիի չափով:

Այն մեքենաներում, որոնցում կհայտնաբերվեն սահմանված պահանջներին չհամապատասխանող շեղումներ, կտրվեն ժամկետներ (առնվազն՝ մեկ ամիս) հիմնախնդրի կարգավորման համար: Միաժամանակ, կխստացվեն տեխստուգման վկայականներ չունեցողների պատժամիջոցներ: Մասնավորապես, նման դեպքերում, ֆիզիկական անձի համար սահմանվող տուգանքը, 10-ի փոխարեն, կկազմի 50, իսկ իրավաբանական անձի տուգանքը, 100-ի փոխարեն՝ 200 լարի:

## ՏԵԽՍՏՈՒԳՄԱՆ ՅՈԹ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ



Պարբերաբար տեխստուգում անցնող ավտոմեքենան հիմնականում պետք է բավարարի չափորոշիչներին, այդ պահանջներն են՝ արգելակները, ղեկի կառավարման համակարգը, տեսանելիությունը, լուսավորությունը, առանցքային լիսեռը, շասին եւ դրա բաղադրիչները, արտաթորումը:

Ինչ վերաբերում է վերջինիս, ապա, ցանկացած ավտոմեքենայի համար, անկախ նրանից, ունի՞ կատալիզատոր, թե՞ ոչ, կսահմանվի ախտոտման թույլատրելի նորմը: Մանրամասներին տեղեկանալու համար գործում է թեժ գիծ՝ 14-84 հեռախոսահամարով:

## 2018 ԹՎԱԿԱՆԻՑ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԿԳՈՐԾԱՐԿՎԻ

2018 թվականից կգործարկվի ավտոմեքենաներից գույքահարկի վճարումը: Գույքահարկի վճարումը առնչվում է տարեկան 40 հազար լարիից ավելին ունեցող ընտանիքներին: «Ըստ եկամուտների, 2017 թվականի գույքային հռչակագիրը լրացվելու է մինչեւ 2018 թվականի նոյեմբերի 1-ը: Հետեւաբար, 40 հազարից ավելի տարեկան եկամուտ ունեցող ընտանիքները ավտոմեքենայի համար գույքահարկը վճարելու են 2018 թվականից»,- նշված է ֆինանսների նախարարության հաղորդագրության մեջ:

Հատկանշական է, որ հարկի տարեկան գումարը հարկատու ընտանիքի համար, ելնելով նրա եկամուտներից, դիֆերենցված է: Մասնավորապես, 40 հազարից մինչեւ 100 հազար լարի եկամուտ ունեցող ընտանիքների համար, գույքահարկի գումարը կազմում է մեքենայի արժեքի առնվազն 0,05 եւ առավելագույնը 0,2 տոկոսի չափով, իսկ 100 հազար եւ ավելի եկամուտ ունեցող ընտանիքների համար՝ մեքենայի գնի առնվազն 0,8 եւ առավելագույնը՝ 1 տոկոսի չափով:

## «ԽԵԼԱՑԻ ԽՑԻԿՆԵՐԸ» ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԵՆ 26452 ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 26-ը ներառյալ, այսպես, կոչված, «խելացի խցիկների» կողմից վավերացվել է ճանապարհային երթեւեկության խախտման 26452 դեպք: Այդ մասին են վկայում ՆԳ նախարարության կողմից հրապարակած վիճակագրական տվյալները:

Վերոնշյալ ժամանակահատվածում ամենից շատ իրավախախտում վավերացվել է արագության գերազանցման համար: Մասնավորապես, ողջ երկրի մասշտաբով 10 քաղաքներում մոնտաժված, այսպես կոչված, «խելացի խցիկները» նոյեմբերի 1-ից 26-ը ներառյալ, թույլ տվածից 15 կմ/ժամ ավելի արագությամբ վավերացրել են 9433 դեպք: 8016 տեսատուգանք է վավերացվել ճանապարհային նշանի խախտման, լուսավորության, ձայնային ազդանշանի կամ վթարային ազդանշանի օգտագործման կարգի խախտման, մոտոցիկլետով կամ տրանսպորտային այլ միջոցներով խմբային երթեւեկությանը մասնակցության ուղղությամբ:




Վիճակագրական տվյալների համաձայն, 3499 դեպք է վավերացվել ճանապարհի երթեւեկելի մասում մեքենաների կանգնեցման, երթեւեկությունը սկսելու կարգի խախտման ուղղությամբ:

Այսպես կոչված, «խելացի խցիկների» կողմից 2322 դեպք է վավերացվել՝ կանգառը արգելված է կամ կանգառումը արգելված է նշանի խախտման ուղղությամբ: Ինչ վերաբերում է հոծ գծի խախտմանը, ապա, այսպես կոչված «խելացի խիցների» կողմից վավերացվել է խախտման 1446 դեպք: 525 տուգանք է գրանցվել հոծ գծի խախտման ու հանդիպակած ուղղությամբ երթեւեկության համար:

Նոյեմբերի 1-ից 26-ը ներառյալ, այսպես կոչված «խելացի խցիկների» կողմից վավերացվել է նաեւ անվտանգության գոտու անտեսման 55, երթեւեկության ժամանակ բջջային հեռախոսից օգտվելու 125, հետիոտների նկատմամբ ճանապարհային երթեւեկության խախտման 223, կարգավորիչի կամ լուսաազդանշանի արգելքի խախտման կամ ճանապարհը զիջելու առաջնահերթության կարգի կամ երթեւեկության արգելման նշանի խախտման, շրջանցման կարգի խախտման, խաչմերուկի, երկաթուղային հատվածի անցման կարգի խախտման, երթեւեկության գերադասություն ունեցող տրանսպորտային միջոցի շարժման արգելման 255 եւ թույլատրելի արագությունը 40 կմ/ժամ եւ ավելի խախտման 153 դեպք:

*Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*